

ՏԻԳՐԱՆ ԱՆՐՈՔՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական Համայնքի իրավակարգի ամենացայտուն բնորոշ գծերից է վերջինիս դիմամիկ բնույթը, որի մասին նշումներ կարելի է գտնել տեսության մեջ¹: Դիմամիկ բնույթն իր ձևական արտացոլումն է ստացել «ավելի սերտ միավորում» արտահայտության մեջ, որը նախատեսված է Եվրոպական Միության վերաբերյալ Սաաստրիխտի Համաձայնագրի A հոդվածում: Իրավական զարգացումը (էվոլյուցիան) տեղի է ունեցել չնայած այն փաստին, որ համաձայնագրում փոփոխություններ կատարելու բավականին կոշտ կարգ է նախատեսված, այն է՝ դրա համար պահանջվում է բոլոր անդամ պետությունների համաձայնությունը և վավերացում բոլոր պետությունների խորհրդարանների կողմից²: Այնուամենայնիվ, Համայնքի մարմինները, ինչպես նաև պետություններն իրենք գտել են տարբեր իրավական եղանակներ և միջոցներ Համայնքի իրավակարգը փոփոխվող հանգամանքներին համահունչ դարձնելու, կրճատ կամ ձևական փոփոխությունների ենթարկելու համար: Եվրոպական Համայնքի գործող իրավունքի նման «ընդարձակ կամ ստեղծագործական սեկնաբանությունը» գործնականում հաճախ նմանվում է համաձայնագրերի փոփոխման: Համայնքի և դատական, և քաղաքական մարմիններն իրենց ներդրումն են ունեցել այս գործում, սակայն Եվրոպական Համայնքների Արդարադատության Դատարանի (այսուհետ Դատարան կամ Եվրոպական Դատարան) ազդեցությունը Եվրոպական Տնտեսական Համայնքի մասին Համաձայնագրի սկզբնական ընկալման վրա առավել ակնառու է: Դրա օրինակներից է, առաջին հերթին, դատական պրակտիկան, սկսած 1960-ական թվականներին քննության առարկա հանդիսացած van Gend en Loos և Costa v ENEL գործերով ընդհուպ մինչև վերջին տասնամյակի ընթացքում կայացված վճիռները, օրինակ՝ Ֆրանկովիչի գործով վճիռը: Ժամանակի ընթացքում և դատական պրակտիկայի ազդեցության տակ համայնական իրավունքի և ազգային իրավունքի միջև կապը ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների:

¹ J. P. Jacqué, "Cours général de droit communautaire", Collected Courses of the Academy of European Law ժողովածուի մեջ, Հատոր I, Գիրք I, 1991, էջ 37:

² Եվրոպական Միության մասին Համաձայնագիր, հոդված N:

գերազանցելով այն բոլոր պատկերացումները և սպասումները, որոնք կարող էին ունենալ Հռոմի Համաձայնագիրը ստորագրողները: Մեկ այլ օրինակ են համդիսանում Ղատարանի վճիռները, որոնցով եվրոպական խորհրդարանը նշվել է որպես առանձին մարմին, որը կարող է հայց ներկայացնել և որի դեմ կարող է հայց ներկայացվել եվրոպական Տնտեսական Համայնքի մասին Համաձայնագրի 173-րդ հոդվածի շրջանակներում, չնայած այն փաստին, որ նախկինում այս մարմնին առանձին վերցված նման իրավունք չէր վերապահված³:

Ստորև փորձ է կատարված հետազոտելու եվրոպական Համայնքի իրավունքի և սահմանադրական իրավունքի, ինչպես նաև եվրոպական Ղատարանի և ազգային սահմանադրական դատարանների միջև հաճախ անց կացվող զուգահեռը: Գրականության մեջ կարելի է մտքեր հանդիպել, որ եվրոպական Ղատարանը գործում է որպես սահմանադրական դատարան⁴: Ղատարանի կողմից էլ իր հերթին նման կարծիք է հայտնվել եվրոպական Միության մասին Համաձայնագրի կիրառման որոշակի ասպեկտների վերաբերյալ հաշվետվության մեջ⁵:

Համեմատական իրավագիտությունը, որպես կանոն, համեմատությունն անց է կացնում տարբեր ազգային իրավական համակարգերի միջև, ուստի հնարավոր են անճշտություններ եվրոպական Միության և ներպետական համակարգերը համեմատելու փորձեր կատարելիս⁶: Առանց փորձելու ջրբաժան գիծ անցկացնել եվրոպական Միության իրավունքի և ազգային սահմանադրական իրավունքի միջև, որից դուրս կամ վեր համեմատությունն անթույլատրելի կլիներ, կարծում ենք, որ առնվազն դատական մարմինները, այսինքն եվրոպական Ղատարանը և ներպետական սահմանադրական դատարանները, համեմատության հարուստ առարկա են կազմում իրենց ինստիտուցիոնալ դերի և իրավունքի մեկնաբանության նկատմամբ դրսևորվող մոտեցումների առումով:

³ ՏՄԽ Գործ 294/83, Parti écologiste "Les verts" v Parliament, 1986, ECR I-1339, Գործ C-70/88, Parliament v Council, 1990, ECR I-2041.

⁴ O. Duc, "A Constitutional Court for the European Communities", Constitutional Adjudication in European Community and National Law - Essays for Justice O'Higgins ժողովածուի մեջ, խմբ.՝ D. Curtin & D. O'Keeffe, 1992, էջ 3; F. Jacobs, "Is the Court of Justice of the European Communities a Constitutional Court?", նույնը, էջ 26, F. Mancini, "The Making of A Constitution for Europe", Common Market Law Review, 1989, №26, էջ 595:

⁵ Եվրոպական Միության մասին Համաձայնագրի կիրառման որոշակի ասպեկտների վերաբերյալ հաշվետվություն, 1995, Լյուքսմբուրգ, էջ 2:

⁶ R. Dehousse, "Comparing National and EC Law: The Problem of the Level of Analysis", American Journal of Comparative Law, 1994, էջ 761:

Դատական վերահսկողության իր գործառույթն իրականացնելիս Դատարանը հաճախ կիրառել է (ավելի ճիշտ մեկնաբանել է) Համայնքների մասին Համաձայնագրերի անհստակ դրույթները, ինչպես նաև նորմատիվ հիմքի բացակայության պարագայում սահմանել կամ այլ կերպ ասած «բացահայտել» է նոր դրույթներ եվրոպական Սիության կիսադաշնային կամ քվադի-ֆեդերալ սահմանադրական կարգը կառուցելու և կիրարկելու նպատակով: Նման դեպքերը, որոնցում Դատարանը ցուցաբերել է այդպիսի ստեղծագործական մոտեցում, ներառում են սահմանադրաիրավական բնույթի հարցեր, որոնք հաճախ ծագում են ներպետական սահմանադրական համատեքստում, մասնավորապես⁷

ա) անհատական իրավունքների պաշտպանությունը պետության ունեցություններից, որը կատարվել է Դատարանի կողմից գրեթե *ex nihilo* սահմանելով իրավունքի ընդհանուր չգրված սկզբունքների տեսությունը;

բ) իշխանությունների ուղղահայաց տարանջատումը և պարտականությունների բաշխումը իշխանության կենտրոնացված և ապակենտրոնացված մակարդակներում (օրինակ ընդդատության տարանջատումը (մանդատների բաշխումը) դաշնային պետությունների դատարանների միջև);

գ) իշխանության հորիզոնական տարանջատումը տարբեր մարմինների միջև, որի առնչությամբ եվրոպական Դատարանն ավելի շուտ և ավելի շատ կիրառել է ինստիտուցիոնալ հավասարակշռության և համագործակցության չգրված սկզբունքները, քան Համաձայնագրերի դրույթները:

Քարածխի և Պողպատի եվրոպական Համայնքի, Ատոմային էներգիայի եվրոպական Համայնքի և եվրոպական Տնտեսական Համայնքի մասին համաձայնագրերը առանձին գլուխ չէին պարունակում նվիրված Համայնքների կողմից ճանաչման ենթակա հիմնարար իրավունքներին: Համաձայնագրերի լուրջությունն այդ առնչությամբ կարող էր նաև դիտավորյալ լինել թույլ տալով յուրաքանչյուր անդամ-պետությանը պաշտպանել իր քաղաքացիներին (պետականորեն) պաշտպանված իրավունքների նկատմամբ ունեցություններից⁸: Սակայն այդ մտադրությունն անհամատեղելի դարձավ 1960թ. եվրոպական Դատարանի կողմից սահմանված համայնական իրավունքի գերակա-

⁷ Այդ հարցմբը մատնանշված են K. Lenaerts-ի "Le juge et la Constitution aux Etats-Unis d'Amerique et dans l'ordre juridique europeen" աշխատության մեջ, 1988, որտեղ համեմատականը տարված է ԱՄՆ Գլխավոր Դատարանի և Եվրոպական Դատարանի միջև:

⁸ H. Rasmussen, "On Law and Policy in the European Court of Justice", 1986, էջ 30, J. Weiler, "Methods of Protection: Towards a Second and Third Generation of Protection", Human Rights and the European Community: Methods of Protection, խմբ. A. Cassese, A. Clapham, J. Weiler, 1991, էջեր 571-575:

յության սկզբունքի հետ; եթե Համայնքի ակտերը գերակայում են ազգային իրավունքի նկատմամբ, ներառյալ սահմանադրական իրավունքի, ապա այդ համայնական ակտերի վերանայումը (դատական կարգով) կարող է կատարվել միայն համայնական իրավունքի կիրառմամբ: Ուստի, Եվրոպական Ղատարանը լրացրեց մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող իրավունքի բացը սահմանելով հիմնարար իրավունքների պաշտպանության իր ուրույն տեսությունը որպես Եվրոպական Համայնքի իրավակարգի չգրված բաղադրատարրը: Այդ նպատակով Ղատարանն օգտագործեց իրավունքի ընդհանուր սկզբունքների գաղափարը, որն ավանդաբար օգտագործվել է ներպետական և միջազգային դատարանների կողմից որպես իրավունքի աղբյուր իրավունքի բացերը լրացնելու համար: Բայց եթե, օրինակ, Արդարադատության Միջազգային Ղատարանի Ստատուտը թույլ է տալիս այդ դատարանին ընդհանուր առմամբ օգտվել իրավունքի ընդհանուր սկզբունքներից որոշումներ կայացնելիս⁹, ապա Եվրոպական Տնտեսական Համայնքի մասին Համաձայնագրով Ղատարանին թույլատրվեց կիրառել անդամ-պետությունների իրավունքին բնորոշ ընդհանուր սկզբունքները, բայց միայն Համայնքի արտապայմանագրային պատասխանատվության սպեցիֆիկ համատեքստում¹⁰: Չնայած դրան, կարծում ենք, որ ընդունելի է այն մոտեցումը, ըստ որի Եվրոպական Համայնքի իրավունքը ներառում է ոչ միայն գրված իրավաճորմեր: Եվրոպական Տնտեսական Համայնքի մասին Համաձայնագրով համայնական ակտերի անվավերության հիմքերի շարքում նախատեսված է համաձայնագրի կամ դրա կիրառմանը վերաբերող ցանկացած նորմի խախտումը¹¹: Այդ ձևակերպումը, ի լրումն համաձայնագրի մեկնաբանության կիրառման և մեկնաբանության ընթացքում օրինականության ապահովմանը վերաբերող Ղատարանի ընդհանուր իրավասությանը, թերևս հաստատում են իրավունքի ընդհանուր սկզբունքների ինքնուրույն իրավունքի աղբյուր հանդիսանալը Եվրոպական Համայնքի իրավակարգում: Իրավունքի ընդհանուր սկզբունքները ներկայումս դարձել են այն հիմնարար չափանիշը, որի հիման վրա Եվրոպական Ղատարանը, ինչպես նաև Առաջին Ստյանի Ղատարանն ստուգում են Համայնքի ակտերի վավերականությունը¹²:

⁹ Արդարադատության Միջազգային Ղատարանի Ստատուտ, հոդված 31(8)(c):

¹⁰ Եվրոպական Տնտեսական Համայնքի մասին Համաձայնագիր, հոդված 215:

¹¹ Եվրոպական Տնտեսական Համայնքի մասին Համաձայնագիր, հոդված 173:

¹² H. Schermers & D. Waelbroeck, "Judicial Protection in the European Communities", 1992, էջեր 27-94:

Գրականության մեջ նշվում է, որ Եվրոպական Ղատարանի կողմից չգրված «Իրավունքների Յոգակագրի» գոյության ճանաչումը մեծապես Գերմանիայի Սահմանադրական Ղատարանի, ինչպես նաև Իտալիայի Սահմանադրական Ղատարանի կողմից համայնական իրավունքի գերակայությունը (ազգային սահմանադրությունների նկատմամբ) կասկածանքի տակ դնելու արդյունք է¹³։ Շատ ավելի սակավ է հիշատակվում կապը Համայնքի իրավունքի ընդհանուր սկզբունքների տեսության և Ֆրանսիայի սահմանադրական իրավունքի միջև։

Ֆրանսիայի 1958թ. Սահմանադրության և Եվրոպական Տնտեսական Համայնքի մասին Համաձայնագրի միջև առկա է որոշակի նմանություն, որքանով առաջինը հանդիսանում է Սահմանադրություն առանց Իրավունքների Յոգակագրի։ Սահմանադրությամբ նախատեսված են որոշ հիմնարար իրավունքներ (ինչպես օրինակ իրավահավասարության պաշտպանությունը), ի լրումն որի Սահմանադրության նախաբանը մարդու իրավունքների առնչությամբ հղում է կատարում 1789թ. Իրավունքների Յոգակագրին, ինչպես նաև նախորդ՝ 1946թ. Սահմանադրության նախաբանին։ Թեև, այդ Սահմանադրության հեղինակների պատկերացմամբ, նախաբանը պետք է լիներ բարեպաշտ մտադրությունների, գեղեցիկ խոսքերի և որևէ հստակ իրավաբանական հետևանքներից զուրկ քաղաքական պարտականությունների համակցություն¹⁴։ հիմնարար իրավունքներին և ազատություններին կատարված անուղղակի հղումները պարտադիր ուժ չունեին Խորհրդարանի և Սահմանադրական Խորհրդի համար։ Այնուամենայնիվ, Սահմանադրական Խորհուրդը 1971թ. կայացրած վճիռներից մեկում սահմանեց, որ այն կարող էր վերանայել օրենսդրությունը (ընդ որում, միայն այն ուժից մեջ մտնելուց առաջ) հիմնարար իրավունքների խախտման տեսանկյունից¹⁵։ Ընդ որում, հարկ է նշել, որ այդ դեպքում պաշտպանության էր ենթակա միավորումներ կազմելու իրավունքը, որն ընդհանրապես նախատեսված չէ 1789թ. Իրավունքների Յոգակագրով, և ոչ էլ 1946թ. Սահմանադրության նախաբանում, բայց որը դիտվեց Խորհրդի կողմից որպես Հանրապետության օրենքներով ճանաչված հիմնարար սկզբունք։ Հետագայում, Խորհրդի կողմից առանձնացված հիմնարար իրավունքների և սկզբունքների համակցությունը, որը փաստորեն նախատեսված էր 1789թ.

¹³ G. Mancini, "The Making of a Constitution for Europe", էջ 608; H. Rasmussen, նշված աշխատությունը, էջ 393; R. Dallen, "An Overview of European Community Protection of Human Rights with some Special References to the UK", Common Market Law Review, 1990, էջեր 766-772.

¹⁴ J. Bell, "French Constitutional Law", 1992, էջ 66

¹⁵ L. Favoreu & L. Philip, "Les Grandes décisions du Conseil constitutionnel", 1989, էջ 231

իրավունքների Յոչակագրով, 1946թ. Սահմանադրության նախաբանով, 1958թ. Սահմանադրությամբ, ներառյալ վերջինիս նախաբանով, հաստատվեց որպես ստանդարտ հտորհդարանի կողմից ընդունված, բայց դեռևս չվավերացված ակտերի սահմանադրականությունն ստուգելու նպատակով:

Ֆրանսիայի Սահմանադրական հտորհդի դրսևորած մոտեցումը, որն իր հերթին կարող է հանդիսանալ Սահմանադրության նախաբանի իրավաբանական ուժին վերաբերող գերմանական դատական նախադեպի ազդեցության արդյունք¹⁶, նման է եվրոպական Դատարանի դատական պրակտիկային երկու առումով:

Սոաջին հերթին, իրավունքների աղբյուրների խաղարկման միջոցով, հիմնարար իրավունքների մասը դառնում է իրավունքի համակարգի վերադաս տարր, ինչը նախատեսված չի եղել համապատասխան փաստաթղթերի հեղինակների կողմից:

Երկրորդ, առանձնակի կարևորություն է վերապահվում ընդհանուր սկզբունքներին, որոնք հնարավոր չէ գտնել որևէ իրավունքների Յոչակագրում այդ աստիճանի մանրամասնությամբ, սակայն որոնց Դատարանը հանգում է մի շարք աղբյուրներից: Սոավել ակնբախ է զուգահեռը Ֆրանսիայի Սահմանադրական հտորհդի կողմից հիշատակված Յանրապետության օրենքներով ճանաչված հիմնարար սկզբունքների, ինչը թույլ է տալիս ազատորեն օգտվել մինչ 1946-ական թվականների օրենսդրական դրույթներից¹⁷, և անդամ-պետությունների սահմանադրական ընդհանուր ավանդույթներին կատարված եվրոպական Դատարանի հղման միջև, որը դարձյալ վերջնական ընտրության հնարավորությունը վերապահում է Դատարանի հայեցողությանը:

Ըստ էության, օգտագործելով չգրված սկզբունքներ սահմանադրություններով ուղղակիորեն նախատեսված սկզբունքների փոխարեն կամ ի լրումն դրանց, գերագույն դատարանները ավելացնում են ընդարձակ իրավաստեղծման կամ իրավունքի մեկնաբանության իրենց հնարավորությունները: Կարելի է գտնել օրինակներ, երբ որոշ սահմանադրական դատարաններ, ունենալով հիմնարար իրավունքների սպառիչ ցանկ, այնուամենայնիվ կիրառել են Սահմանադրությամբ ուղղակիորեն չնախատեսված սկզբունքներ, ինչպես

¹⁶ P. Haberle, "Theorieelemente eines allgemeinen juristischen Rezeptionsmodells", Juristen Zeitung, 1992, էջ 1037:

¹⁷ J. P. Costa, "Principes fondamentaux, principes généraux, principes à valeur constitutionnelle", Conseil constitutionnel et Conseil d'Etat, 1988, էջ 133:

օրինակ անհատականության ազատ զարգացման իրավունքը Գերմանիայում կամ անձի անխախտելի իրավունքները Իտալիայում¹⁸:

Այնուամենայնիվ, Եվրոպական Դատարանի և Սահմանադրական Խորհրդի միջև լակն տարբերություն է մնում: Եթե Խորհրդի կողմից կիրառվող հիմնարար իրավունքների զաղափարը արդյունավետ կերպով նպաստեց Խորհրդի դերի փոխակերպմանը՝ գործադիր իշխանությունը լուկ օրենսդրից պաշտպանող մարմնից Ֆրանսիայի սահմանադրական համակարգում կենտրոնական դիրք զբաղեցնող մարմնի¹⁹, ապա Եվրոպական Դատարանն ապրեց իր դերի ավելի մակերեսային փոփոխություն: Ի սկզբանե պարզ էր, որ իր հիմնական գործառույթներից է հսկողությունը Համայնքի ակտերի վավերականության նկատմամբ: Իրավունքի ընդհանուր սկզբունքները ուղղակի դարձան վերանայման լրացուցիչ հիմք:

Սակայն վերջերս Դատարանն ավելի խիստ մոտեցում է դրսևորում իրեն իրավասություն վերապահելով վերահսկելու ազգային (այլ ոչ միայն համայնական) նորմերի համապատասխանությունը Համայնքի իրավունքի ընդհանուր սկզբունքներին²⁰:

¹⁸ M. Ponthoreau, "La reconnaissance des droits non-écrits par les cours constitutionnelles italiennes et française", 1994.

¹⁹ A. Stone, "The Birth of Judicial Politics in France. The Constitutional Council in Comparative Perspective", 1992, էջ 230:

²⁰ A. Clapham, "Human Rights and the European Community: A Critical Overview", 1991, էջեր 33-55, J. Temple Lang, "The Sphere in which Member States are Obligated to Comply with the General Principles of Law and Community Fundamental Rights Principles", Legal Issues of European Integration, 1991, №2, էջ 23: